ունի որ մեր կողմերում ևս արձագանք կգտնէ հիւանդների և պանդուխտների խնամատարութեան համար այդ ցանկալի հրաւէրը։

«ԼՈՒՄԱՑ»-Ի ԽՄԲԱԳՐԻ ՔԱՆԵՀԻՆԳԱՄԵԱԿԸ

1901 թ. նոյեմբերին լրանում էր Գիւտ ա. քահանայ Աղանեանի դրական և ուսուցչական գործունէութեան քանեհինգամեակը. բարձրապատիւ հոր բազմաթիւ համակրողները տեսնելով նորա եռանդոտ և ժրաջան աշխատանքը յօդուտ հայրենի դրականութեան՝ միտք լղացան ընտանեկան կերպով ասնել նորա յոբելեանը՝ առաւել խրախուսելու նորան և միջոց տալու՝ իւր դրական երկերը տպագրելու։ Այդ համեստ նպատակն իրագործելու համար տ. հոր համակրողներից և ծխականներից կազմուեց մի մասնաժողով։ Մասնաժողովը մասնաւոր դիմումներ անելով զանազան անձանց՝ կարող եղաւ մի համեստ գումար ժողովել ի նպաստ յոբելեարի դրական երկերի հրատարակութեանց։

Հոկտեմբերի 28-ին համեստ ու վայելուչ կերպով ուսնուեց «Լումայ»-ի խմբագրի յոբելեանը. ժամը տասից արդէն «Լումայ»-ի խմբագրատուն էին դալիս զանազան պատգամաւորութիւններ, քահանաներ, ուսուցիչներ, ծխականներ, Թիֆլիզի հայ և ռուս մամուլի ներկայացուցիչներ, դրագէտներ և այլն։ Ցարգելի հանդիսականները մինչև ժամի երկուսը զբաղուեցին շահադրգիռ զրոյցներով և Տէր հոր ստացած և ի ցոյց դրուած նուէրները դիտելով։ Ժամի երկուսին եկան սրբազան Գարեգին եպիսկոպոս Սաթունեան, բարձրապատիւ Կորիւն, Գարեգին, Տիրայր և Մամբրէ վարդապետները, իրենց հետ բերելով Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը։

Հանդէսը բացուեց Նորին Վեհափառութեան կոնդակի ընթերցմամբ—կարդաց Տ. Գարեգին վարդապետը—. Վեհափառ Հայրիկը հոգեշունչ խօսքերով դրուատելով Հ. Գիւտ ա. քահանայի՝ ազգին և եկեղեցուն մատուցած ծառայութիւնները՝ օրհնում էր նորան և խրախուսում՝ շարունակել նոյն հոգւով գործելու։ Կոնդակի ընթերցումից յետոյ կարդացուեցան ուղերձներ կարգադրիչ մասնաժողովի, քահանաների և ծխա-

կանների կողմից. ապա հերթը հասաւ այն բազմաթիւ շնորհաւորական հեռագիրների և նամակների ընթերցմանը, որ ստացուել էին Կովկասի ամէն կողմերից, Ռուսաստանից և Տաճկաստանից։ Ի թիւս այլոց աչքի էին ընկնում շնորհաւորութիւններ՝ կ. Պոլսի Սրբազան պատրիարք Օրմանեանից, Ամեն. Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոսից, սրբազան արքեպիսկոպոսներ՝ ա. ա. Սուքիասից, Ներսէսից, Գէորգից և Աբիստակէս Դաւթեանից, եպիսկոպոսներ՝ ա. ա. Մակարից, Շիրակունուց, Փիլոյեանից, Մայր Աթոռի Ճեմարանի տեսչից և ուսուցիչներից, Ղարաբաղի թեմական դպրանոցից, Ս. Պետերբուրգի, Գանձակի հասարակութիւններից և քահանաներից, Պոլսի Հայոց պատրիարքարանից, տ. Յ. ա. ք. Մկրտանից, Լայպցիգի հայ ճեմարանական ընկերութիւնից. Ն. Նախիջ.-ի, Բաղուի, Գորուայ բարձ. փոխանորդներից։ «Լումայի» աշխատակից Յար. Թումանեանից ոտանաւոր ձօն և այլն։ Անձամբ կամ լատուկ պատգամաւորներով շնորհաւորել էին Թիֆլիզի բոլոր հայ և ռուս պարբերական մամուլի խմբագիրները բացի «Մշակ»ից և «Մուրճ»ից)։

Նուէրներ ստացուել էին. 1. Թիֆլիզի հայ հոգևորականներից՝ ոսկէ ժամացոյց. 2. Տէր-հօր ծխականներից՝ արծաթէ սերվիզ. 3. Կենդրոնական դրամատուանոցից՝ արծաթէ սերվիզ. 4. Աբդար Յովհաննիսեանից՝ արծաթէ անօթ (վազ). 5. այդ միջոցին Թիֆլիզ գտնուող եպիսկոպոս ու վարդապետներից մի շատ սիրուն արծաթակազմ լուշատեար. 6. Բաղուից՝ Գաբա ընտանիքից՝ արծաթեայ լուշատեար. 7. Աստրախանից՝ պ. Սերեբրակեանից արծաթեայ գրիչ և այլն։

Հանդէսը վերջանալուց յետոյ ներկայ եղողներից 30 հոգի հիւրասիրուեցան լօբելեարի կողմից և ճաշի միջոցին բաւականին բարեմաղթութիւններ եղան՝ ցանկանալով «Լումայի» խմբագրին աւելի մեծ եռանդ և տոկունութիւն՝ լօգուտ հայ դրականական ասպարէզի։

Տայ Աստուած, որ բարձրագոյն Տէր Գիւտը իրականացնէ հասարակութեան բաղձանքը։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.